ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/17 գնման պայմանագրի

ք. Երևան «18» մարտի 2021թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից և «Վահրամ Կնյազյան»Ա/Ձ -ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Կնյազյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական և գնումների մասին օրենսդրությամբ, ինչպես նաև հիմք ընդունելով 22.02.2021 թվականին կնքված N ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/17 ծածկագրով պայմանագրի /այսուհետ Պայմանագիր/ 7.5 և 7.15 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել 370 000 (երեք հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ, համաձայն սույն Համաձայնագրի N 1 հավելվածի:

1.2 Հաստատել վճարման ժամանակացույցը՝ համաձայն սույն Համաձայնագրի թիվ 1 հավելվածի:

1.3 Պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչությունը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Կողմերի միջև կնքած Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի թիվ 1 հավելվածը համարվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	Կատարող
Երևանի քաղաքապետարան	« Վահրամ Կնյազյան »Ա/Ձ
ք. Երևան, Արգիշտի փող. 1	ՀՀ Շիրակի մարզ, ք.Արթիկ,
Կենտրոնական գանձապետարան	Բաղրամյան փող., 1 շ., բն.2
ՀՀ 900012000494	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ-ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02593108	Հ/Հ 220309604969000
	ՀՎՀՀ 61718934
Է. Կիրակոսյան ----------	Վ. Կնյազյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«18» մարտի 2021 թ. կնքված
«ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/17» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	CPV կոդը	անվանումը	ծառայությունների դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540/1267	Նազարբեկյան թաղամասի հ.48 շենքի և տանիքի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների	....	...	140600	370 000	370 000	370 000	370 000	370 000	370 000	370 000	370 000	370 000	370 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012000494
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Կատարող
« Վահրամ Կնյազյան »Ա/Ձ
ՀՀ Շիրակի մարզ, ք.Արթիկ,
Բաղրամյան փող., 1 շ., բն.2
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ-ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 220309604969000
ՀՎՀՀ 61718934

Վ. Կնյազյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

18 մարտի 2021թ.
ք. Երևան

Թիվ 01-445

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 20 30 40 446835/2

(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ԵՔ-ԲՄԽՕՁԲ-21/17» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում ԱՁ Վահրամ Կնյազյանի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից կնքվելիք թիվ «ԵՔ-ԲՄԽՕՁԲ-21/17» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 703.000 (յոթ հարյուր երեք հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 27/06/2022թ.-ին հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 04 նոյեմբերի 2022թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ԵՔ-ԲՄԽՕՁԲ-21/17» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,
2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վաճառքների խթանման և ռեգիոնալ կառավարման
գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Ն. Նազարյան

Կատարող՝
Դավիթ Բարղության
Հեռ. 010 31-88-88 (ներքին՝ 7091)